Պատմություն և մշակույթ 2023 № 1 (19)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2023.19.1.008

Spiritual and Political Activities of Catholikos Sargis I Sevantsi

Vardan Alexanyan
https://orcid.org/0009-0005-3615-4778
Candidate of Historical Sciences, Associate Professor , Lecturer at the Department of Armenian History and Social Science, Branch of YSU in Ijevan
vardanalexanyan406@gmail.com

Kaywords: Sargis Sevantsi, Gagik I Bagratuni, Aristakes Lastivertsi, Ani, Patriarchal Throne, Tondrakite movement, Erroneous Easter, Syunik Throne, abdication.

The article examines the spiritual and political activities of the Armenian Catholicos Sargis I Sevantsi (992-1019) during the reign of Gagik I (990-1018), when the Bagratid kingdom was in the period of greatest power and prosperity. The Armenian Church and the Patriarch play an important role in ensuring the political unity of the country, resolving conflicts between feudal principalities and uniting the people around statehood. On the initiative of the Catholicos in 992, the spiritual center of the country was transferred from Argina to Ani, which was dictated by the need to implement a unifying mission by combining church and political resources. After the death of Gagik I Bagratuni (1018) in the context of deepening internal political tensions in the country, the aged patriarch was forced to renounce the patriarchal throne and in 1019 ordain Petros Getadardz (1019-1054) as the new head of the church.

One of his important initiatives to strengthen the integrity and unity of the hierarchical structure of the Armenian Church was the restoration in 1006 of the metropolitan privileges of the highly revered throne of Syunik.

At the beginning of the 11th century, he waged a consistent struggle against the Tondrakit movement, which had risen with renewed vigor in Armenia, whose ideology undermined the hierarchical and religious foundations of the Armenian Church. The Armenian patriarch waged a merciless fight against the Tondrakites, who had strengthened themselves in the provinces of Apaunik, Mananaghi and Hark.

He resisted the encroachments of the Byzantine Church and defended the hierarchical and confessional independence of the Armenian Church. Thanks to the activities of Sargis Sevantsi, the authority of the Catholicosate increases and the hierarchical structure of the church is strengthened.

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-1(19), 2023, pp. 8-29

Received: 09.07.2023
Revised: 12.11.2023
Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2023

Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսի հոգևոր-քաղաքական գործունեությունը

Վարդան Ալեքսանյան

պ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս

Հիմնաբառեր՝ Սարգիս Ա Սևանցի, Գագիկ Ա Բագրատունի, Արիստակես Լաստիվերցի, Անի, Հայրապետական աթոռ, Թոնդրակյան շարժում, Ծռազատիկ, Սյունյաց աթոռ, կաթողիկոսի հրաժարական:

Հոդվածում քննության է ենթարկվում հայոց կաթողիկոս Սարգիս Ա Սևանցու (992-1019) հոգևոր-քաղաքական գործունեությունը Գագիկ Ա-ի (990-1018) գահակալության շրջանում, երբ Բագրատունյաց թագավորությունը գտնվում էր հզորության և բարգավաճման բարձրագույն շրջափուլում: Հայոց եկեղեցին ու վեհապետը կարևոր դեր են կատարում երկրի քաղաքական միասնության ապահովման, ավատական իշխանությունների հակամարտությունների լուծման ու պետականության շուրջ ժողովրդին միավորելու հարցում: Սևանցի կաթողիկոսի նախաձեռնությամբ 992 թ. երկրի հոգևոր կենտրոնը տեղափոխվում է Արգինայից Անի, որը թելադրված էր եկեղեցական ու քաղաքական ռեսուրսների մեկտեղմամբ միավորիչ առաքելության իրականացման անհրաժեշտությունից: Գագիկ Ա Բագրատունու մահից (1018 թ.) հետո երկրի խորացող ներքաղաքական լարվածության պայմաններում առաջացած տարիք ունեցող հայրապետը պարտադրված հրաժարվեց կաթողիկոսի պաշտոնից և 1019 թ. իր ձեռքով Պետրոս Գետադարձին (1019-1054) ձեռնադրեց նոր եկեղեցապետ: Հայ եկեղեցու նվիրապետական կարգի ամբողջությունն ու միասնությունն ամրապնդելու նրա կարևոր ձեռնարկներից էր 1006 թ. Սյունյաց բարձրապատիվ աթոռի մետրոպոլիտական առանձնաշնորհումների վերահաստատումը:

XI դարասկզբին նա հետևողական պայքար տարավ Հայաստանում նոր ուժով բորբոքված Թոնդրակյան շարժման դեմ, որի գաղափարախոսությունը խարխլում էր հայոց եկեղեցու նվիրապետական և վարդապետական հիմքերը: Հայոց հայրապետն անողոք պայքար է մղել Ապահունիք, Մանանաղի, Հարք գավառներում ուժեղացած թոնդրակեցիների դեմ: Սարգիս Սևանցին ընդդիմացել է բյուզանդական եկեղեցու ոտնձգություններին, պաշտպանել հայ եկեղեցու նվիրապետական և դավանաբանական ինքնուրույնությունը:

Սարգիս Սևանցու գործունեության շնորհիվ բարձրացավ կաթողիկոսական իշխանության հեղինակությունը, ամրապնդվեց եկեղեցու նվիրապետական կառույցը:

Spiritual and Political Activities of Catholikos Sargis I Sevantsi

Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսի հոգևոր-քաղաքական գործունեությունը

Духовнополитическая деятельность католикоса Саргиса I Севанци

Вардан Алексанян
к.и.н., доцент, преподаватель кафедры истории Армении и обществоведения
Иджеванского филиала ЕГУ

Ключевые слова: Саргис I Севанци Гагик I Багратуни, Аристакес Ластиверци, Ани, Патриарший престол, Тондракитское движение, кривая пасха, Сюникский престол.

В статье исследуется духовно-политическая деятельность армянского католикоса Саргиса I Севанци (992-1019) в период правления Гагика I (990-1018), когда царство Багратидов находилось в период наивысшего могущества и процветания. Армянская Церковь и Патриарх играют важную роль в обеспечении политического единства страны, решении конфликтов между феодальными княжествами и объединении народа вокруг государственности. По инициативе католикоса в 992 г. духовный центр страны переносится из Аргины в Ани, что было продиктовано необходимостью реализовать объединительную миссию путем объединения церковных и политических ресурсов. После смерти Гагика I Багратуни (1018 г.) в условиях углубления внутриполитической напряженности в стране, постаревшый патриарх был вынужден отказаться от патриаршего престола и в 1019 г. рукоположить новым главой церкви Петрос Гетадардз (1019-1054).

Одной из важных его инициатив по укреплению целостности и единства иерархического строя Армянской церкви было восстановление в 1006 году митрополитских привилегий высокочтимого Сюниксого престола.

В начале XI века он вел последовательную борьбу с поднявшимся с новой силой в Армении Тондракитским движением, идеология которого подрывала иерархические и вероисповедательные основы Армянской церкви. Армянский патриарх вел беспощадную борьбу с тондракитами, укрепившимися в провинциях Апауник, Мананаги и Арк.

Он противостоял посягательствам Византийской церкви, защищал иерархическую и конфессиональную независимость Армянской церкви. Благодаря деятельности Саргиса Севанци повышается авторитет католикосата, укрепляется иерархичская структура церкви.

* * *

Ներածություն: Գագիկ Ա Բագրատունու (990-1018) գահակալության երեք տասնամյակներին, երբ Բագրատունյաց թագավորությունը գտնվում էր հզորության և բարգավաճման բարձրագույն շրջափուլում, թագավորական իշխանության ու եկեղեցու միջև առկա էին սերտ փոխգործակցության հարաբերությունները: Բագրատունի գահակալը ամեն կերպ աջակցում էր եկեղեցուն, իսկ վերջինս, վայելելով քաղաքական իշխանության հովանավորությունը, զորեղանում էր և նորանոր կալվածների տիրանում: Հայաստանի

քաղաքական իշխանության և եկեղեցու համագործակցությունը կարևոր երաշխիք էր երկրի միասնության ապահովման համար, քանի որ զարգացած ավատատիրության դարաշրջանին բնորոշ նախարարական տների անջատողական միտումները վտանգում էին երկրի ամբողջականությունը: Սարգիս Ա Սևանցու հայրապետության օրոք հայոց եկեղեցին՝ որպես ավատատիրական խոշոր կազմակերպություն, քաղաքական իշխանության կարևոր հենարանն էր և սատարում էր երկրի միասնականությանը նպատակաուղղված իշխանության քաղաքականությունը: Սարգիս Սևանցու գործունեության շնորհիվ բարձրացավ կաթողիկոսական իշխանության հեղինակությունը, ամրապնդվեց եկեղեցու նվիրապետական կառույցը: XI դարի սկզբին նա հետևողական պայքար էր տանում Հայաստանում նոր ուժով բորբոքված Թոնդրակյան շարժման դեմ, որի գաղափարախոսությունը խարխլում էր հայոց եկեղեցու նվիրապետական և վարդապետական հիմքերը: Հայոց պետականությանը սպառնացող արտաքին և ներքին վտանգների պայմաններում կարևորվում է հայոց կաթողիկոսի դերը երկրի միասնականության պահպանման ու ամրապնդման գործում: Մատենագրական վկայությունների վրա հիմնված փաստարկման և համադրման եղանակով հետազոտվել են Սարգիս Ա Սևանցու գործունեության բոլոր դրվագները, ինչպես նաև հայոց հոգևոր և քաղաքական իշխանությունների հարաբերությունները:

Սարգիս Ա Սևանցու ընտրվելը Հայոց կաթողիկոս: X դարի վերջին և XI դարի առաջին երկու տասնամյակներին, երբ Բագրատունյաց թագավորությունը գտնվում էր վերելքի ամենաբարձր կետում, ավելի էին սերտանում հարաբերությունները հայոց քաղաքական ու հոգևոր-եկեղեցական իշխանությունների միջև: Գագիկ Ա Բագրատունին, հավատարիմ իր մերձավոր նախորդների դիրքորոշմանը, կարևորում էր հայոց եկեղեցու առաջնորդի դերը Հայաստանի ներքին հարցերում ու արտաքին հարաբերություններում: «Յայնմ ժամանակի էր և Հայոց աշխարհին թագաւոր Գագիկ... այր հզօր և յաղթող ի պատերազմունս: Ի սորա ժամանակս պայծառացան կարգք եկեղեցւոյ, և լուսաւորեցան մանկունք ուխտի սրբութեան: Քանզի ունէր զաթոռ հայրապետութեան Տէր Սարգիս..., Զոր շնորհիւն Աստուծոյ կոչեն ըստ արժանաւորութեան. և նստուցանեն յաթոռ մերոյ Լուսաւորչին»,-գրում է դեպքերին ժամանակամերձ մատենագիր Արիստակես Լաստիվերցին [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 25-26]: Խաչիկ Ա Արշարունու (973-992) մահից հետո «ի ՆԽԱ թուականին» (992թ.) «զկնի զատկին, յաւուր երեքշաբաթուջ»[1] Գագիկ Ա-ի հրամանով Անիում գումարվեց ազգային-եկեղեցական ժողով, որտեղ կաթողիկոս ընտրվեց Սևանավանքի վանահայր Սարգիսը [Ասողիկ, 2010, 810-811]: Ազգային-եկեղեցական ժողովն ուներ ներկայացուցչական կազմ, ներկա էին բազմաթիվ եպիսկոպոսներ և իշխաններ՝ «որ յաշխարհէս Հայոց եւ որ ի Յունաց կողմանէն» [Ասողիկ, 2010, 811]: Ժողովը նախագահում էր Արշարունյաց եպիսկոպոս տեր Սահակը[2]: Թեև ժողովականների կազմը հանվանե չի հիշատակվում, սակայն ենթադրվում է, որ ժողովին մասնակցել է նաև ժամանակի ճանաչված հոգևոր-եկեղեցական

[1] Մեկ այլ սկզբնաղբյուրում, որից օգտվել է հայր Մ. Չամչյանը, նշված է եղել «յերկուշաբաթի աւուր» տե՛ս Չամչյան, 1984, 877:

[2] Ըստ Մ. Օրմանյանի՝ X դարում Արշարունիքի եպիսկոպոսական աթոռը «պատուոյ յառաջնութիւն մը կը վայելէր», տե՛ս Օրմանյան, 2001, 1350: Վահան Ա Սյունեցի կաթողիկոսի գործունեությունը քննելու առիթով 970 թ. Անիում գումարված եկեղեցական ժողովը գլխավորում էր Արշարունյաց եպիսկոպոս տեր Խաչիկը, որը հետագայում դարձավ հայոց կաթողիկոս, տե՛ս Ասողիկ, 2010, 756:

գործիչ, Սարգիս Սևանցու պատվերով գրված «Տիեզերական պատմություն» երկի հեղինակ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը: Նա կաթողիկոսարանի սպասավորներից էր և ի պաշտոնե զբաղվում էր եկեղեցու բարեկարգման աշխատանքներով: Դրա վկայությունը իր մատյանի ամփոփման մեջ կաթողիկոս Սարգիս Սևանցուն ուղղված խոսքն է, որը եզրափակում է իր կատարած աշխատանքին հասարակության տված ոչ միանշանակ գնահատականի արձանագրմամբ. «Մանաւանդ յարածուփ շրջանք եւ հանապազորդեան հոգք եկեղեցւոյ, որ ըստ հրամանի ձեր՝ ոչ թողացուցանէին մտաց իմոց զետեղել ի պատշաճ յաւրինուած բանիս, զոր կրեմ զփառս եւ զանարգանս, զգովութիւն եւ զպարսաւանս ի ծանրասիրտ եւ ի խստապարանոց ազգէս մերմէ, ի բարեխոհ եւ ի բղջախոհ մարդկանէ» [Ասողիկ, 2010, 829]:

Հայոց թագավորի կամքը որոշիչ էր կաթողիկոսական ընտրության ժամանակ: Գագիկ Ա Բագրատունին հաստատեց ժողովի ընտրության արդյունքները և «կացոյց կաթողիկոս Հայոց զՏէր Սարգիս» [Ասողիկ, 2010, 810]: Ազգային եկեղեցական ժողովի մանրամասներին տեղյակ տարոնցի պատմիչը հավաստում էր, որ Սարգիս Սևանցին գործող եկեղեցական օրենքներով ընտրված լեգիտիմ կաթողիկոս էր, որովհետև նրա ընտրությունը կատարվել էր «առանց կաշառոյ եւ այլ երկրաւոր շողոքորթութեանց»: Մատենագիրը սեղմ և դիպուկ ձևակերպմամբ հիմնավորեց նորընտիր կաթողիկոսի արժանավորությունը՝ ասելով. «զի ոչ ինքն զկնի պատուոյն, այլ պատիւն զկնի ինքեան ընթացաւ» [Ասողիկ, 2010, 811]:

XII դարի ժամանակագիր Սամվել Անեցին հայտնում է, որ Խաչիկ Ա Արշարունու մահից հետո «անառաջնորդ եկաց երկիրս Հայոց ամս Բ (2)» [Սամուէլ Անեցի, 2014, 179]: Անեցուն նման եզրակացության հիմք է տվել Ասողիկի այն վկայությունը, որ Խաչիկ Ա Արշարունին ամփոփվել է Արգինայի եկեղեցուն կից հանգստարանում, «զոր ինքն շինեալ էր ի ՆԼԹ (990) թուականին» [Ասողիկ, 2010, 810; Ալեքսանյան, 2020գ, 72-73]: Պետք է նկատել, որ նշված տարեթիվը վերաբերում է հանգստարանի կառուցմանը և ոչ թե Խաչիկ կաթողիկոսի մահվանը [Ասողիկ, 2000, 422, ծանոթ. 140]: Անեցին նույն թվականով (990) թվագրել է Խաչիկ կաթողիկոսի մահը՝ եզրակացնելով, որ 990-992 թվականներին հայրապետական գահը եղել է թափուր:

Մեկ այլ տեղեկություն էլ պահպանվել է Հայոց կանոնագրքում. 40 կանոնախմբերի վերջում ավելացված հայոց կաթողիկոսների գավազանագրքի վերջին նշումը վերաբերում է Սարգիս Սևանցու ձեռնադրությանը. «Յետ սորա (Խաչիկ Ա Արշարունի – Վ. Ա.) ամ մի առանց վերադիտողի մնաց աշխարհս Հայոց: Իսկ Գագիկ Շահնշահ ժողովեալ զամենայն եպիսկոպոսն եւ զհարս ձեռնադրեն զտէր Սարգիսն հայրապետ աթոռ սրբոյն Գրիգորի, որ <է> հայ թվականն ՆԽԱ (992) էր, իսկ ի ծնընդենէ Փրկչին ՋՂԵ (995) եւ ի սկզբանց անդի ՅՆԺԷ (6417): Սա նմանեալ սրբոյն Գրիգորի Հայոց լուսավորչի» [Կանոնագիրք Հայոց, 1971, XXIV]:

Քննվող ժամանակաշրջանի փաստերի վերլուծությունը, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև ձևավորված հարաբերությունները, որևէ հիմնավոր պատճառ չէին տալիս մեկ կամ երկու տարով հետաձգելու կաթողիկոսական ընտրությունները: Եթե կաթողիկոսական գահը երկու տարի թափուր լիներ, ապա այդ մասին չէր կարող չհիշատակել ժամանակակից մատենագիր, ճանաչված հոգևորական Ասողիկը: Օրինական կաթողիկոսի տևական բացակայությունը առաջ պետք է բերեր կաթողիկոսական տեղապահի պահանջ, որի

մասին նույնպես խոսք չկա: Հայ եկեղեցու պատմության բազմահմուտ ուսումնասիրող Մ. Օրմանյանը հերքում է Սամվել Անեցու այս տեղեկությունը՝ ասելով. «Երկու տարի շարունակ աթոռին պարապ եւ անտէրունջ մնալը անօրինակ կերպով երկարեալ տեւողութիւն է, որուն նմանը միայն Մովսէս Եղիվարդեցիի մահուընէ ետքը տեսնուած է, եւ պատմութիւնն ալ Վրթանէս տեղապահին անունը պահած է, ուստի հնար չէր, որ այսպիսի տարօրինակ դիպուած անյիշատակ անցնէր Ասողիկի գրիչին տակէն» [Օրմանյան, 2001, 1349]:

Հայրապետական աթոռի երկամյա թափուր լինելու տեղեկությունը չհաստատելով՝ Մատթեոս Ուռհայեցին հայտնում է. «Տէր Խաչիկ ձեռնադրեաց յաթոռ իւր զտէր Սարգիս» [Մատթէոս Ուռհայեցի, 1898, 49, Սմբատ Սպարապետ, 1859, 42]: Ուռհայեցու՝ Խաչիկ Արշարունու կողմից Սարգիս Սևանցուն կաթողիկոս ձեռնադրելու հաղորդումը չի երկրորդվում հրապարակի վրա եղած այլ սկզբնաղբյուրների տվյալներով: Ուստի վերլուծելով խնդրո ժամանակահատվածում ձևավորված հարաբերությունները՝ հանգում ենք հետևյալին. հայոց եկեղեցու գործունյա և կարող առաջնորդ Խաչիկ Արշարունու աթոռակալության վերջին շրջանում հայոց քաղաքական ու հոգևոր իշխանությունների միջև տարաձայնություններ չեն եղել. նույնիսկ ենթադրվում է, որ Գագիկ Ա արքայի օծման արարողությունը կատարել է Խաչիկ Արշարունին [Օրմանյան, 2001, 1334], սկզբնաղբյուրներում տեղեկություններ չկան կաթողիկոսի առողջական խնդիրներ ունենալու մասին, որոնց պատճառով նա ստիպված կլիներ վաղաժամ թողնել գահը և ձեռնադրել նոր հայրապետ: Այս ենթադրությունն ամրապնդվում է դեպքերին ժամանակակից պատմագիր Ասողիկի ամփոփիչ խոսքով. «Սա (Խաչիկ Արշարունի – Վ. Ա.) լցեալ աւուրքք, կատարեալ ժամանակաւ ի բարւոք ծերութեան փոխի յաշխարհէս» [Ասողիկ, 2010, 810]: Հետևաբար կարծում ենք, որ Խաչիկ Ա Արշարունին կյանքին հրաժեշտ է տվել 992 թ. ձմռանը, թերևս հունվար ամսին: Խիստ հավանական է թվում, որ լեռնաշխարհում տիրող ցրտաշունչ ձմռան պատճառով Սարգիս Սևանցու ընտրությունը հետաձգվել է մինչև գարնան վերջ, ինչն էլ հիմք է ծառայել խոսելու կաթողիկոսական աթոռի թափուր լինելու մասին:

«Սևանցի» մակդիրը Սարգիսը ստացել է Սևանավանքում երկարամյա սպասավորության համար, սակայն նրա ծննդյան տարեթվի ու վայրի մասին վկայությունները բացակայում են: Հայտնի է, որ ապագա կաթողիկոսի հոգեմտավոր կյանքի կազմակերպումը վստահված է եղել հորեղբորը՝ «առաքինաջան եւ ժիր մշակին Քրիստոսի», որի հովանավորությամբ «սա (Սարգիս Ա Սևանցին – Վ. Ա.) ի տղայական տիս ընծայեալ Աստուծոյ» [Ասողիկ, 2010, 810], և «սնեալ սրբութեամբ ի ծոց եկեղեցւոյ և վարժեալ կրօնաւորական ճգնութեամբ ի կրօնաստանն՝ որ կոչի Սևանայ կղզի» [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 26]: Հորեղբայրը, որի անունը հայտնի չէ, ենթադրաբար այդ տարիներին եղել է Մաշտոց Ա Եղիվարդեցու (897-898) հիմնադրած Սևանավանքի առաջնորդը, որտեղ ապագա կաթողիկոսը ստացել է սկզբնական կրթությունը: Այդ ժամանակից սկսած՝ նա խստորեն հետևում է հոգևոր կյանքի կանոններին ու պահանջներին «եւ ոչ ինչ երկրաւորացս պարապեալ հոգոց. այլ ի բաց եդեալ զզբաւսանս աշխարհածուփ անցաւոր զբաղմանց՝ ըստ պատուիրանին սրբութեան» դառնում է Սևանավանքի սպասավոր [Ասողիկ, 2010, 810]: Սարգիս կրոնավորը գերադասում է անապատական և ճգնավորական կյանքը, ապրում է «զաւրէն զուարթուն անմարմին հրեշտակաց՝ սաղմոսանուագ ձայնիւ ժրաջան աղաւթիւք զցայգ եւ զցերեկ»՝ ծառայելով Տիրոջը: 978 թ. կամ 980-ականների սկզբին՝ «յաւուրս մանկութեան իւրոյ»

Գեղամա գավառում շրջագայելիս[1], Գագիկ Բագրատունին նկատում է արժանավոր հոգևորականին և նշանակում նրան Շողագա վանքի[2] առաջնորդ: Դառնալով թագավոր՝ Գագիկ Ա-ն որոշում է Սևանավանքի «զհայրութեան եւ զառաջնորդութեան պատիւն նմա (Սարգիս Սևանցուն-Վ. Ա.) տալ» [Ասողիկ, 2010, 811]: Նրա առաջնորդության տարիներին Սևանավանքում աշխուժանում է հոգևոր-կրթական կյանքը, իսկ նա «բարւոք վերակացութեամբ՝ հաճոյանար Աստուծոյ եւ մարդկան»: Նույնիսկ հայրապետական պատվին արժանանալը չի փոխում տեր Սարգսի կենսակերպն ու կենցաղը, «այլ ըստ Աստուծոյ պատկերեալս առատաձեռն յողորմութիւնս եւ ի խոնարհութեան զարդս, ժրաջան աղաւթիւք ի տուէ եւ ի գիշերի կատարէր զկանոն կարգի կրաւնաւորական սահմանին, պնդութեամբ վարեցեալ եւ պահոցն սրբութեամբ եւ ձեւով մարմնոյ որգունակ սրբոյն Բարսղի յԱստուածաբանէն ներբողեալ» [Ասողիկ 2010, 811]:

Սարգիս Սևանցու օրոք՝ 995 թ. օգոստոսի 19-ին, տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժ, որի աշխարհագրությունն ընդգրկում է Ծոփք, Խորձեան, Հաշտեանք, Բալահովիտ և Պաղնատուն գավառները: Խոսելով երկրաշարժի սոսկալի հետևանքների մասին՝ պատմիչը նշում է. «Եւ ամենայն շինուածք քաղաքաց, գիւղից եւ ագարակաց տապալեալ՝ զբնակիչսն ի ներքոյ առնէին՝ մեռեալս եւ կիսամեռս զնոսա առնելով, եւ մնացելոցն կենդանեաց ճիչք լալեաց եւ վայք ողբոց ի վեր բարձրանային» [Ասողիկ, 2010, 814]: Ասողիկը չի հիշատակում բնական աղետի օրերին կաթողիկոսի ձեռնարկած գործողությունները՝ հավանաբար անընդունելի համարելով սեփական ժողովրդի դժբախտության վրա վարկանիշ բարձրացնելը, սակայն, ինչպես նկատում է Մ. Օրմանյանը, հնարավոր չէր, որ նրա նման ժողովրդական առաջնորդը «իր բոլոր հոգածութիւնը դարձուցած չըլլար այդ խեղճերուն օգնութիւն հասցնելու համար» [Օրմանեան, 2001, 1376]:

998 թ. Ատրպատականի ամիրա Մամլանը հարձակվում է Տայքի կուրապաղատության վրա: Տայքի Դավիթ Կուրապաղատը օգնություն է խնդրում: Հայոց թագավոր Գագիկ Ա-ն, հավատարիմ մնալով Դավիթ Կուրապաղատի հետ կնքած դաշինքին, հաշվի առնելով նաև Հայաստանին սպառնացող վտանգը, Վահրամ Պահլավունու հրամանատարությամբ վեց հազար ռազմիկներից բաղկացած ընտիր զորք է ուղարկում օգնության: Հակառակորդները բանակում են Ապահունիք գավառի Ծումբ գյուղի մոտակայքում և «բազում աւուրս» մնում սպասողական վիճակում: Պաշտպանությանը մասնակցում էր նաև հայոց հայրապետը, որը խոսքով ու աղոթքներով քաջալերում էր զինվորներին և ժողովրդին. «Եւ թագաւորքն առատաձեռն զողորմութիւնսն աղքատաց բաշխէին եւ զցայգսն՝ պաշտաւն սաղմոսանուագ երգոց ուխտն

---

[1] Գագիկ Բագրատունին այդ ժամանակ «արքայազուն իշխանի դիրքի մէջ էր», տե՛ս Օրմանեան, 2001, 1351: Պատմաբան Ա. Եղիազարյանը նշում է, որ Գագիկ Բագրատունին Գեղամա գավառը՝ որպես տիրույթ, ստացել էր եղբայրների՝ Սմբատ Բ-ի և Գուրգենի հետ հայրական ժառանգությունը 978 թ. բաժանելու արդյունքում, տե՛սԵղիազարյան, 2021, 26-28:

[2] Շողագա կամ Շողվագա վանքը գտնվում է Գեղարքունիքի մարզի, Մարտունու Ձորագյուղում: Բազմամարդ միաբանությամբ վանքը Պետրոս առաքյալի անունը կրող հիմնական եկեղեցիով 877-886 թթ. կառուցել է Գեղարքունյաց իշխանուհի Սյունյաց մեծ տիկին Մարիամը, տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի, 1861, 127: Գագիկ թագավորը հետագայում Շողագա եկեղեցին նվիրեց Սևանավանքի միաբանությանը, տե՛ս Ասողիկ, 2010, 811:

սրբութեան հանդերձ հայրապետաւն կատարէին» [Ասողիկ, 2010, 819]: Բախումը տեղի է ունենում 998 թ. հոկտեմբերի 18-ին և ավարտվում հայ-վրացական միացյալ զորքի հաղթանակով:

Կաթողիկոսության դերի բարձրացումը: Սարգիս Սևանցու աթոռակալության շրջանում Անին կառուցապատվում և զարդարվում է հրաշագեղ եկեղեցիներով: Նշանակալի իրադարձություններ էին 992 թ. կաթողիկոսարանի տեղափոխումը Անի և այն Հայաստանի հոգևոր կենտրոն դարձնելը: Սմբատ Բ թագավորը (973-990) Անիի կենտրոնական մասում նախաձեռնում է Մեծ Կաթողիկե եկեղեցու[1] շինարարություն, որի ճարտարապետն էր Տրդատը: 1001 թ. Կաթողիկե-Մայր տաճարի կառուցումն ավարտին է հասցնում Սմբատ Բ-ի եղբոր՝ Գագիկ Ա-ի կինը՝ հայոց Կատրանիդե թագուհին: Մայր տաճարի կառուցման հեռահար նպատակը կաթողիկոսական նստավայրի տեղափոխությունն էր, երկրի քաղաքական և հոգևոր իշխանությունների մեկտեղումը Անի մայրաքաղաքում[2]: Հայր Մ. Օրմանյանի կարծիքով Սմբատի մահվանը հաջորդած երկու տարում՝ 990-992 թթ., կաթողիկոսարանը այն չափով է կառուցվել, որ 992թ. «Սարգիս կրցած է ընտրութենէ եւ օծումէն ետքը այլեւս Արգինա չդառնալ, եւ մնալ Անի, Գագիկի մոտ, որ կանուխէն ալ մասնաւոր սէր ունեցած էր Սարգիսի վրայ» [Օրմանեան, 2001, 1358][3]: Ականատես պատմիչը գրում է, որ Քրիստոսի ծննդյան 1000-ամյակին՝ «յայնմ ժամանակի, յորում լնոյր լրութեամբ ամն Ռ. (1000) մարմնանալոյ կամ մարդանալոյ Տեառն մերոյ» Գագիկ թագավորը Անիում կառուցում է Ս. Գրիգոր (Գագկաշեն), եկեղեցին, որը VII դարում կառուցված Զվարթնոցի (Ս. Գրիգոր) կրկնօրինակն էր՝ կառուցված «նոյնաձև չափով և յօրինուածով» [Ասողիկ, 2010, 827]: Սամվել Անեցին ավելացնում է, թե Գագիկը եկեղեցին շինել տվեց «գաղափար առեալ զլուսազարդ զհրաշալի զՍուրբ Գրիգորն զշինեալն ի Ներսիսէ հայրապետէ» [Սամուէլ Անեցի, 2014, 180, Կիրակոս Գանձակեցի, 1961, 88]:

Սարգիս Սևանցին Անիում ձեռնարկում է սուրբ Հռիփսիմյանց կույսերին նվիրված եկեղեցու կառուցումը: Շինարարության ավարտից հետո կաթողիկոսը մեծ շուքով Վաղարշապատի վկայարաններից այստեղ է փոխադրում Հռիփսիմյան կույսերի մասունքների մի մասը: Վարդան Արևելցին այդ մասին գրում է. «Սա (տեր Սարգիս–Վ. Ա.) շինեաց վկայարան սրբոց Հռիփսիմեանցն, առընթեր կաթուղիկէին Անւոյ, եւ անդ փոխեաց զնշխարս նոցա՝ բերեալ մեծաւ հանդիսիւ, եւ կարգեաց զօրն տօն մեծ» [Վարդան վարդապետ, 1862, 90]: «Այս արժեքավոր վկայությունը,– եզրակացնում է պատմաբան Կ. Մաթևոսյանը,–ցույց է տալիս կաթողիկոսի՝ Անին ոչ միայն կաթողիկոսարանի ներկայությամբ հաստատված եկեղեցական կենտրոն տեսնելու, այլև հայոց եկեղեցու նվիրական սրբություններն ամփոփող սրբավայր դարձնելու ձգտումը»

[1] Անիի կաթողիկե եկեղեցին պատմիչները նկարագրում են տպավորիչ մակդիրներով. «Զմեծաշէն եկեղեցին», տե՛ս Ասողիկ, 2010, 827, «Զկաթողիկէն պայծառ», տե՛ս Կիրակոս Գանձակեցի, 1961, 88: «Կաթուղիկէն սխրատեսիլ», տե՛ս Սամուէլ Անեցի, 2014, 182:

[2] Անին ոչ միայն թագավորանիստ, այլև կաթողիկոսանիստ դարձնելը եղել է դեռևս Աշոտ Գ Ողորմածի ծրագրերում: Սակայն այդ ուղղությամբ նրա ձեռնարկներն ավարտուն արդյունք չեն տվել, տե՛ս Մաթևոսյան, 2008, 5:

[3] Պատմաբան Կ. Մաթևոսյանը կարծում է, որ այդ ժամանակ է կառուցվել նաև կաթողիկոսարանի շենքը: «Ենթադրաբար, Ախուրյանի ձորափի եզրին վեր խոյացող այն կառույցն է, որ հետագայում՝ XI դարի 70-ական թվականներին, մասամբ ձևափոխելով և մինարե կցելով, մզկիթի է վերածել Մանուչէ ամիրան»,–գրում է Կ. Մաթևոսյանը, տե՛ս Մաթևոսյան, 2021, 31: Մաթևոսյան, 2008, 11, ծանոթ. 29:

[Մաթևոսյան, 2008, 11]: Փաստորեն, ինչպես որ հայոց եկեղեցու բնօրրան Վաղարշապատում է Մայր տաճարը (Սուրբ Աստվածածին) գտնվում Հռիփսիմյանց կույսերի վկայարանների հարևանությամբ, այնպես էլ կաթողիկոսն Անիի Մայր տաճարի (Ս. Աստվածածին) մոտ կառուցում է Հռիփսիմյանց կույսերի վկայարան, սրբերի մասունքները տեղափոխում այստեղ ու «մեծ տօն» սահմանում: «Այս պարագան,– գրում է հայր Օրմանյանը,– Հայոց լուսաւորութեան եւ Հռիփսիմեանց պատմութեան մասին ազգային աւանդութեան նոր հաստատութիւն կընծայէ» [Օրմանեան, 2001, 1376]:

Հայոց կաթողիկոսի առաջնային խնդիրներից էր եկեղեցու նվիրապետական կառույցի միասնության ամրապնդումը, և այդ ուղղությամբ նրա կարևոր ձեռնարկներից էր Սյունյաց աթոռի մետրոպոլիտական առանձնաշնորհումների վերահաստատումը: Կաթողիկոսական աթոռի դեմ Սյունյաց Հակոբ Ա եպիսկոպոսի (918-958) «ապստամբության» և Աղվանից կաթողիկոսության հետ մերձենալու փորձերի պատճառով Անանիա Մոկացին (946-958) Սյունյաց աթոռը զրկել էր մետրոպոլիտության աստիճանից՝ հետ վերցնելով «զպատիւն ի տանէն Սիւնեաց, այսինքն՝ զխաչն որ զառաջն տանէին, և զգաւազանն բազմածախ և մեծագին, և բազմականն ոսկեթել զորս ընդ ինքեանց շրջեցուցանէին, զսահմանեալն յառաջին թագաւորաց և ի հայրապետաց Հայոց» [Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի, 1861, 208][1]: Սյունիքի Վասակ թագավորը (998-1040) նահանգի նոր հոգևոր առաջնորդ ձեռնադրելու խնդրանքով դիմում է Սարգիս Սևանցուն: Իր նախաձեռնությունը Վասակը նախապես համաձայնեցնում է Գագիկ շահնշահի և թագուհի Կատրանիդեի հետ և ստանում նրանց բանավոր համաձայնությունը: «Յուղարկեալ էր և նոցա (Գագիկ շահնշահին և Կատրանիդե թագուհուն–Վ. Ա.) արքունի ընծայս, և գրով ծանուցեալ զխնդիրն ի կաթողիկոսէն»,-մանրամասնում է Սյունյաց պատմիչը [Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի, 1861, 222]: Պատկառելի շքախմբով և մեծարժեք ընծաներով Սյունյաց Հովհաննես Է եպիսկոպոսը ուղևորվում է Անի՝ «աթոռ հայրապետութեան տանն Հայոց»: Պատշաճ արարողակարգով տեր Սարգիսը Հովհաննես Է-ին (1006-1058), որն իր ազգականն էր (Ալեքսանյան, 2020բ, 72), ձեռնադրում է Սյունիքի մետրոպոլիտ: Վերադարձնում է նրան «զսեպհական խաչն Սիւնեաց և զոսկէտուտն վառն և ըզմեծագին գաւազանն և զպատուական գահոյս բազմականին», որոնք խնամքով պահվում էին կաթողիկոսարանի գանձարանում: «Նորոգեն զաստիճան և զպատիւ մեծի և առաքելական աթոռոյն Սիւնեաց ըստ առաջնոյն օրինի»,- գոհունակությամբ արձանագրում է Սյունյաց պատմիչը [Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի, 1861, 222]:

[1] Այս մասին ակնարկ կա նաև Սյունյաց նորընծա եպիսկոպոս Վահան Ջևանշերյանի հավատարմագրում, տե՛ս Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի, 1897, 141: Նշյալի մասին հակառակն է հիշատակում XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին՝ ասելով. «հրամայեաց խաչ տանել առաջի արքեպիսկոպոսին Սիւնեաց, ուր և երթիցէ», տե՛ս Կիրակոս Գանձակեցի, 1961, 87: Այս կապակցությամբ, բնականաբար, առավել հավաստի է Սյունյաց պատմիչի հաղորդածը: Հավանաբար Գանձակեցուն ծանոթ չի եղել Անանիա Մոկացու հայտնի գիրը:

Հայոց հայրապետը հատուկ կոնդակով պաշտոնականացնում է այս արարողությունը, հիմնավորում սյունեցիների օրինական պահանջը[1]: Կոնդակը գրվել է 1006 թ. և կնքվել կաթողիկոսի «սովորական մատանեաւս»: Այն հասցեագրված է Սյունյաց Վասակ թագավորին, նրա եղբայր Սևադա իշխանին, քեռայր Աշոտ իշխանին և «առ այլ ազատսդ և յընդհանուր ժողովրդականսդ ըստ երկոտասան կարգեալ գաւազանացդ» [Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի, 1861, 226]: Կաթողիկոսը գրության մեջ ներկայացնում է մետրոպոլիտական կարգի շնորհման իրավական հիմքերն ու շարժառիթները, շեշտելով, որ սա սոսկ իր պաշտոնական նախաձեռնությունը չէ: Մինչ այդ պատշաճ կարգով քննության են բերվել հայոց եկեղեցու արխիվներում պահպանվող «զմեծափառ նամակս և զվճիռ պայմանի՝ գրեալ ձեռամբ նախնի հայրապետացն Հայոց, սկսեալ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ և յորդւոց և ի թոռանց իւրոց», տե՛ս Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի, 1861, 227: Ընդհանուր առմամբ ներկայացվել է կաթողիկոսական 55 շրջաբերական գրություն, որոնցում շարադրված են եղել Սյունյաց աթոռի պատիվները և առաջնորդների տիտղոսները[2]: Բացառություն է կազմել միայն Վահան Սյունեցի եպիսկոպոսին ուղղված Անանիա Մոկացու գրությունը, որում բացակայել են նախորդ թղթերում տեղ գտած պատվատիտղոսները [Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի, 1897, 129-141]: Կաթողիկոսական կոնդակով վերահաստատվում են Սյունյաց աթոռի արտոնությունները, պաշտոնապես ճանաչվում է նրա «գերագոյն իշխանութիւնը» նահանգի բոլոր գավառների, եպիսկոպոսների ու վանահայրերի վրա[3]: Վկայակոչելով առաքելական հայրերի հրամանները Սյունյաց աթոռի պատիվների վերաբերյալ՝ կաթողիկոսը հաստատում է Սյունյաց պահանջի օրինական լինելը՝ զգուշացնելով, որ «զի մի ոք իշխեսցէ պակասեցուցանել ի սահմանադրեալ վիճակէ սոցա և կամ նւաստացուցանել և բառնալ ի պատուոյ և յաստիճանէ սոցա» [Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի, 1861, 227]:

Սյունյաց աթոռը պատվից և աստիճանից ապագայում չզրկելու կաթողիկոսական վերոհիշյալ պատվիրանը ավելի շուտ կրում էր արարողակարգային բնույթ, քանզի առաքելական հայրերի հրամանները Սյունյաց աթոռի վերաբերյալ բազմիցս անտեսվել և խախտվել են [Ալեքսանյան, 2020բ, 74]: Հայտնի է, որ երկրի ներքաղաքական իրավիճակով և Սյունյաց աթոռի դիրքորոշումներով պայմանավորված՝ հայոց հայրապետերը տարբեր վերաբերմունքն են դրսևորել Սյունիքի հոգևոր իշխանության նկատմամբ, երբեմն պատժել են և զրկել բարձր

---

[1] Վաստակաշատ Օրմանյանը Սյունյաց աթոռի՝ մետրոպոլիտական առանձնաշնորհումների վերահաստատման գործում մեծ նշանակություն է տալիս այնպիսի սուբյեկտիվ գործոնների, ինչպիսին են հայոց թագուհու՝ Կատրանիդեի՝ Վասակ Սյունեցու դուստր լինելը և Հովհաննես Սյունեցու ու Սարգիս Սևանցու ազգակցությունը, տե՛ս Օրմանեան, 2001, 1360:

[2] Վ. Հացունին պարզունակ մեկնաբանություն է տվել Սյունյաց մետրոպոլիտության վերականգնման փաստին՝ պայմանավորելով այն Սյունյաց եպիսկոպոսի խորամանկությամբ և Սարգիս Սևանցու պարզամտությամբ: Նա նաև կասկածի տակ է դրել Սարգիս Սևանցու շրջաբերականի վավերականությունը, տե՛ս Հացունի, 1927, 287-288:

[3] Սյունիքի բուն գավառներից բացի՝ Տաթևի թեմին էին ենթարկվում նաև Վանանդը, Որդուատը, Նախճավանը, Ջուղան և Գողթնը, սակայն դրա հետ մեկտեղ նա զրկվում էր Աղահեճք գավառից, որն անցել էր Աղվանից կաթողիկոսությանը: «Ենթադրել, թե Տաթևի թեմի ընդարձակումը համապատասխանում էր Սյունյաց թագավորության տարածքի մեծացմանը, ճիշտ չէ»,– եզրակացնում է Բ. Հարությունյանը, տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, 1976, 122:

պատիվներից, երբեմն խրախուսել և արտոնություններ են շնորհել: Կաթողիկոսի սույն ձեռնարկը ուներ նաև քաղաքական ենթատեքստ. սրանով ավելի էր ամրապնդվում Սյունիքի թագավորության ենթակայական կապը Անիի թագավորության հետ:

Հայոց թագավորության վերելքի շրջանում Սարգիս Սևանցին անվերապահորեն սատարում էր Գագիկ Ա-ի կենտրոնացնող քաղաքականությունը, հաշտարար միջնորդությամբ հարթում էր թագավորի ու գավառական խռովարար տիրակալների հակամարտությունը: 1001 թ. Տաշիր-Զորագետի թագավոր Դավիթ Կյուրիկյանը՝ հայտնի Անհողին մականվամբ, ըմբոստացավ Գագիկ Ա-ի դեմ: Վերջինս դիմեց վճռական միջոցների. զորք է մտցրեց Տաշիր գավառ և պաշարեց Դավիթ Անհողինի նստավայր Շամշուլդե բերդաքաղաքը: Այնուհետև գրավում է Գագ գավառը և զորքով մտնում Աղստևի հովիտ: Մոտ երեք ամիս տևած այս պատժարշավից հետո «միջնորդութեամբ հայրապետին Տեառն Սարգսի» Դավիթ Անհողինը ստիպված «եկն ի հնազանդութիւն Գագկայ արքայի» [Ասողիկ, 2010, 825-826]: Շիրակավանում կողմերի միջև հաշտություն կնքվեց, որի համաձայն՝ Դավիթ Անհողինը պարտավորվում էր նախկինի պես հավատարիմ մնալ Անիի թագավորին և ընդունել նրա գերակայությունը:

Գագիկ Ա-ն հոգատար վերաբերմունք ուներ հայոց եկեղեցու նկատմամբ: Արքան ընդառաջ է գնում Արշարունյաց եպիսկոպոս Սահակի խնդրանքին և Մրենի վանքը ազատում կոռային պարտույթներից. «Յանուն Աստուծոյ այս իմ հրամանք են Գագկայ Շահիազնշահի ազատեալ եմ զՄրենոյ զկոռն որ ի Նախճաւանի էր զմարդոյ եւ զեզին ի ձեռն խնդրոյ աստուածապատիւ տեառն Սահակա Արշարունեաց եպիսկոպոսի որ անմոռաց խնդրէ ի Քրիստոսէ թողութիւն լինել մեղաց իմոց» [Ալիշան, 1881, 138]:

Հայ-բյուզանդական տոմարական տարբերությունը: Սարգիս Սևանցի կաթողիկոսի աթոռակալության ժամանակաշրջանում շարունակվում էր հակամարտությունը բյուզանդական եկեղեցու հետ: Հայոց եկեղեցին միշտ նախանձախնդիր է եղել իր դավանաբանական և նվիրապետական ինքուրույնության պահպանմանը ու համապատասխան արձագանք է տվել հույն եկեղեցու տարաբնույթ ոտնձգություններին: Հայ-բյուզանդական դավանաբանական անհամաձայնությունների գագաթնակետը 1007 թվականի ծռազատիկն էր[1]: 257 տարվա ընդհատումից հետո՝ 1007 թվականին, Սարգիս Սևանցու ջանքերով վերականգնվեց Ծռազատիկի տոնը: Մատթեոս Ուռհայեցու հաղորդմամբ Ծռազատիկը եղել է (ՆԾԵ) 1006 թվականին, որովհետև այդ տարում հույն վարդապետները «ընդ ստութեամբ փակեցին զուղղորդ պատուիրանս

[1]«Ծռազատիկ» կոչվածը հայ ու հույն եկեղեցիների միջև Զատիկի տոնակատարության օրվա մեկ շաբաթյա տարբերությունն էր: Ծռազատիկի առաջին դեպքի թվագրման մասին Մ. Օրմանյանը գրում է. «Այդ ծռութիւնը շուտ ալ տեղի ունեցաւ, վասնզի յետ ութ ամի երեւեցաւ եղծումն իրացն, այսինքն է՝ Էասի 561-ին կազմած շրջանէն 8 տարի ետքը, եւ իրօք ալ 570-ին ճշմարտուած է այդ տարբերութիւնը կամ առաջին ծռազատիկը», տե՛ս Օրմանեան, 2001, 663: Զատկի տոնակատարության առիթով հակասությունները ամենամյա չէին, սակայն դարձյալ անհամաձայնություններ էին առաջանում, որոնք բերում էին լուրջ ընդհարումների: Տևական պատերազմները, հարևան եկեղեցիների հետ դավանաբանական վեճերը, որոնք սպառնում էին հայ ժողովրդի և եկեղեցու ինքնուրույնությանը ստիպում էին հույներից սահմանազատվել նաև եկեղեցական տոների հաշվարկների հարցում, տե՛ս Էյնաթյան, 2017, 367: Ծռազատիկի խնդիրը վերացավ 1824 թ.:

Աստուածաշունչ գրոց և զսուտ և զխաբեբայ տումարն հակառակամարտին Իրիոնի ընկալան, և զճշմարտագիր տումարն մեծին Անդրիասայ ոչ ընկալան, այլ ածին նոքա զլրումն Զատկին ի կիրակիէն ի շաբաթն և զկնի աւուր միոյ Զատիկ արարին, զոր պարտ էր զկնի ութ աւուրն կատարել. և ամենայն տանն Յունաց մոլորեալ ի սուրբ Զատկէն» [Մատթէոս Ուռհայեցի, 1898, 42-43; Սմբատ Սպարապետ, 1859, էջ 42]: Մինչդեռ Սամվել Անեցին հույների Ծռազատիկը թվագրում է 1009 թ.՝ ասելով. «Մոլորեցին Յոյնք զԶատիկն եւ ոչ վառեցաւ լոյսն յԵրուսաղէմ յայնմ աւուր վասն որոյ կոտորեցին անօրէնքն ի քրիստոնէիցն ԺՌ (10000) ոգիս» [Սամուէլ Անեցի, 2014, 182]:

Հայ ու հույն հոգևորականների միջև այս առիթով նկատելի հուզումներ են առաջացել «ի քաղաքն ի Կոստանդնուպօլիս և յամենայն աշխարհն Հունաց»: Քանի որ հույները «անօրէնութեամբ արարին Զատիկն իւրեանց», ուստի ավանդաբար Զատիկի ճրագալույցի երեկոյան Քրիստոսի գերեզմանից դուրս բերվող լույսը չի վառվում, հայերի ու հույների միջև լուրջ հակադրություն է առաջանում, որից օգտվելով, «ազգն անօրինաց, որ կային ի քաղաքն Երուսաղէմ, իբրեւ տեսին զԶատիկն քրիստոնէիցն ի մէջ սուրբ Յարութեանն, կոտորեցին սրով զամենայն քրիստոնեայսն՝ ոգիք իբրեւ տասն հազար, և լցաւ սուրբ Գերեզմանն Քրիստոսի արեամբ աղօթաւորացն» [Մատթէոս Ուռհայեցի, 1898, 43]:

Հաղթանակով ավարտելով բուլղարների դեմ կազմակերպած արշավանքը՝ Վասիլ Բ-ն (976-1026) վերադառնում է Կոստանդնուպոլիս և որոշում վերջ դնել հույների սարքած տոմարական խառնաշփոթին: Իր մոտ է հրավիրում հույն գիտնականների, սակայն չգոհանալով նրանց հակասական պատասխաններից՝ դիմում է հայոց կաթողիկոս Սարգիս Սևանցուն և Գագիկ թագավորին: Խնդրում է Կոստանդնուպոլիս ուղարկել Հովսեփ Հնձացի և Հովհաննես Կոզեռն[1] վարդապետներին, որոնց ինքը «յանուանէ գիտէր»: Վերջիններս չեն կարողանում մեկնել մայրաքաղաք, սակայն «թղթօք գեղեցկաշար բանիւք հասկացուցին զթագաւորն ամենայն խորին քննութեամբ» [Մատթէոս Ուռհայեցի, 1898, 43-44, Սմբատ Սպարապետ, 1859, 43]: Վասիլը երկրորդ անգամ խնդրում է իր մոտ ուղարկել «այր կորովի և յաղթող» Սամվել Կամրջաձորեցուն՝ բանավիճելու հույն վարդապետների հետ: Սամվելը հերքում է հույն վարդապետների փաստարկները՝ արժանանալով կայսեր հավանությանը: Վերջինս գնահատում է «զվարդապետն Հայոց» Սամվելի աստվածաբանական հմտությունները և նրան «յուղարկեալ մեծաւ պարգեւօք յաշխարհն Հայոց» [Մատթէոս Ուռհայեցի, 1898, 45, Սմբատ Սպարապետ, 1859, 44]: Տարվելով ազգային ինքնագովության մարմաջով՝ Ուռհայեցին հավանաբար չափազանցում է հայ վարդապետի դերը, քանի որ դրանից հետո էլ հույները հետևում էին «զսուտ և զխաբեբայ տումարն հակառակամարտին Իրիոնի» և առաջնորդվում էին սեփական տոմարական հաշվումներով [Օրմանեան, 2001, 1363]:

Պայքար Թոնդրակյան աղանդի դեմ: Սարգիս Ա Սևանցու հայրապետության օրոք XI դարի սկզբին Հայաստանում ուժեղանում և լայն տարածում էր ստանում Թոնդրակյան աղանդավորական շարժումը: Սա լուրջ մարտահրավեր էր, որը թիրախավորել էր հայոց եկեղեցու նվիրապետությունն ու վարդապետությունը, ինչպես նաև հայ ավանդական հասարակական

[1] Հովսեփ Ընձայեցին Կարինի Հնձուց վանքի վանահայրն էր: Հովհաննես Կոզեռն Տարոնացին XI դարի առաջին կեսի նշանավոր գիտնական-տոմարագետ էր: Գրել է տոմարագիտական և պատմական աշխատություններ, տե՛ս Քիւրտեան, 1967, 1-16:

կարգերը: Զարգացած ավատատիրության ժամանակաշրջան թևակոխած Հայաստանում, ուր առաջանում էին զանազան քաղաքներ, աղանդավորական շարժումը ստանում էր սպառնալի չափեր, ընդլայնում աշխարհագրությունը և ներգրավում նոր խավեր: Խնդրո առարկա ժամանակաշրջանում թոնդրակյանների շարժման զանգվածայնացման գրավականներից մեկը հայ ժողովրդի ամենակազմակերպված հասարակական միավորի՝ գյուղական համայնքի ցուցաբերած աջակցությունն էր [Հովհաննիսյան, 1957, 375]: Մեծ թվով հոգևորականների (այդ թվում՝ բարձրաստիճան) ներգրավումը շարժման մեջ, հայոց եկեղեցու կարգերը ոտնահարելը, ծեսերն ու արարողությունները չընդունելն ու ծաղրելը ստիպում էին եկեղեցու պետին դիմելու պատժիչ գործողությունների:

Լաստիվերցին պատմում է Հակոբոս անունով մի եպիսկոպոսի մասին, «որ ունէր զվերակացութիւն եկեղեցեաց տանն Հարքայ» [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 119]: Սա իր իշխանության սկզբում վարքով ու կենցաղավարությամբ ձևանալով «առաքինական կերպարանս», ձեռք էր բերել բազմաթիվ հետևորդներ հոգևորականների և աշխարհականների, այդ թվում իշխանավորների շրջանում: Հայ եկեղեցու կարգերի վերաբերյալ Հակոբոսի առաջարկած ու գործադրած «նորամուծությունների» պատճառով «յերկուս բաժանեցան ժողովուրդք, յոմանց ընկալեալ եղև այս, և յոմանց ոչ. և իբրև ամենայն մարդ ի ծուփս և ի տարակուսանս անկեալ կայր» [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 122-123]: Թոնդրակյաններին որակելով «ի հանդերձս գառնենիս, և ի ներքոյ են գայլք յափշտակողք»՝ պատմագիրն անկեղծորեն խոստովանում է, որ «բանք նոցա իբրև զքաղցկեղ ճարակին» պարզամիտ և անմեղ մարդկանց [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 120]: Տարածվող վտանգի առաջն առնելու և եկեղեցական դասը համախմբելու համար Սարգիս Սևանցին 1002 թ. Հարքում «մեծ եպիսկոպոսաց և յերիցանց՝ ի վարդապետաց և ի կրօնաւորաց» ժողով է գումարում: Բազմամարդ ժողովի օրակարգում Հակոբոսի պառակտիչ գործունեության քննությունն էր և եկեղեցական դասի գործողությունների համակարգումն ընդդեմ աղանդավորների: «Այլախոհ» հոգևորականը չի ներկայանում ժողովական ատյան, քանի որ «իշխանք գաւառին ամենեքեան ի նորա կեղծաւորական կերպարանացն իբրև շղթայիւք կապեալ էին, խոստանային պատերազմի օրինակաւ մեռանել յառաջ՝ քան թէ զնա ի ձեռս ժողովոյն տալ» [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 123]: Հեռակա կերպով, պատգամավորների միջոցով նա հերքում է իրեն ուղղված մեղադրանքները՝ «յուսացեալ յիշխանացն օգնականութիւն և ոչ յԱստուած»: Շատ չանցած՝ տեղի է ունենում մի դեպք, որը դյուրացնում է աղանդավորների հետ հաշվեհարդար տեսնելու գործը. Հակոբոսի կողմնակիցներից Եսայի Կարնեցի անունով մի կրոնավոր, համեստ և երկյուղած մի անձնավորություն, «տեսեալ և տեղեկացեալ նորայ (Հակոբոսի–Վ. Ա.) մծղնեայ կրօնիցն», ներկայանում է հայոց կաթողիկոսին և պատմում եղելությունը[1]: Անձամբ «ներսի» մարդուց տեղեկանալով աղանդավորների գործերին, ծրագրերին ու հարաբերություններին՝ կաթողիկոսը

[1] Ե. Տեր-Մինասյանի կարծիքով «մծղնեայ կրօնիցն» մեջ Հակոբոս եպիսկոպոսին մեղադրելը ակներև զրպարտության հետևանք է, որի հեղինակը Եսայի Կարնեցին է, տե՛ս Տեր-Մինասյան, 1968, 169: Եսայի Կարնեցին հավանաբար եկեղեցու կողմից աղանդավորների շրջանում ներդրված անձնավորությունն էր:

վճռում է ամեն գնով չեզոքացնել նրանց պարագլխին: «Քաղցրական բանիւք» նա իր մոտ է հրավիրում Հակոբոս եպիսկոպոսին և կալանավորում: Աղանդավորական շարժմանը հարելու համար ժողովրդի մեջ վախ սերմանելու նպատակով կաթողիկոսը նրա նկատմամբ կիրառում է ցուցադրական-պատժական գործողություններ. «ի քահանայական կարգէն լուծեալ, և աղուեսադրոշմ կերպարանօք խարան յերեսս նորա եդեալ, քարոզն առ նմին աղաղակէր, թէ՝ Որ ի սրբոյ Լուսաւորչին հաւատոյ սողոսկեալ յանօրէն Թոնդրակեցեացն ի մարդադէմ գազանաց փարախն մտեալ միաբանի, դատ և իրաւունս զայս կրեսցէ: Եւ հրամայէ ի բանտի արգելուլ զամենաթշուառ անձն, քանզի կամէր թէ զղջանայ թերևս, խոստովանի ի բաց կալ ի պիղծ աղանդոյն. զի յոյժ ողորմէր կորուսեալ անձինն» [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 124]: Կյանքի վերջին շրջանը անցկացնելով թափառական վիճակում, հանգրվանելով աղանդավորական տարբեր համայնքներում՝ անփառունակ Հակոբոսը մեռավ «էշի պես և թաղվեց լեշի պես»: Նրա մահով առանց առաջնորդ մնացած հետևորդները Հարքում հետզհետե նոսրանում և թուլանում են, իսկ մի մասն էլ այնտեղից հեռանում է [Սարգիսեան, 1893, 76]: Սկզբնաղբյուրներում Սարգիս կաթողիկոսի նմանատիպ խիստ գործողությունների մասին այլ տեղեկություններ չկան, բայց ենթադրում ենք, որ դրանք մեկ դրվագով չեն սահմանափակվել:

Այդ ժամանակ թոնդրակյանների դեմ պայքարի կարևոր ճակատներից էր Մանանաղի գավառը, որտեղ նրանց հոգեորս գործունեությունը նկատելի արդյունք էր տվել: Այստեղ նրանց առաջնորդն էր Շիրնի բերդաքաղաքում ապրող «սատանայի ժիր մշակ», ծեր աբեղա Կունծիկը, որը թոնդրակյան ուսմունքը սովորել էր «ի շնաբարոյ աբեղայէ ումեմնէ՝ որ համբաւէր զինքենէ՝ թէ յԱղուանից է»: Պատմիչի այս տեղեկատվությունը վկայում է, որ Հայաստանի այլ վայրերից այստեղ գործուղված են եղել քարոզիչ-աղանդավորներ: Կաշե և Աղյուս գյուղերում նրանց հաջողվել է իրենց շուրջը համախմբել իշխանական դասի բարձրատոհմիկ անձանց, Հրանույշ, Ախնի և Կամարա անունով քույրերին, որոնք ծագում էին «յընտիր ազգէ» և ազարակատերեր էին: «Միաբանեցաւ ընդ չարադն կանայսն» նաև նրանց եղբայր իշխան Վրվեռը [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 125-126]: Հիշյալ գյուղերի բնակիչների մեծ մասը դարձել էր նրանց հետևորդը և քաջալերված իշխանների հովանավորությունից «դիւական կատաղութեամբն մոլեալ, զեկեղեցիսն՝ որ յիւրեանց օձաբնակ տեղիսն ի վաղնջուց շինեալ էին, զայն ի խոպան դարձուցին»: Տարված եկեղեցական ծեսերի, արարողությունների և խորհրդանշանների մերժման մոլուցքով՝ ջարդում էին «զփրկութեան մերոյ զնշանն և զտէրունական յաղթութեան զզէնն»՝ խաչի նշանները: Պատմիչը մի դրվագ է հիշատակում նրանց սանձարձակ գործողություններից՝ գնահատելով այն որպես սրբապղծության ու հանդգնության գագաթնակետ. Մեծ Պենտեկոստեի օրը[1] «կամարար մշակքն սատանայի» գիշերով գնում են Բազմաղբյուր գյուղը, որը հայտնի էր իր նշանավոր խաչով: Նրանք մուրճով ջարդուփշուր են անում ժողովրդի համար ուխտավայր դարձած խաչը և ծածուկ վերադառնում «յօձաբնակ որջս իւրեանց»: Դեպքը, ըստ հայր Օրմանյանի հաշվումների, տեղի է ունեցել 1011 թ. ապրիլի 1-ին [Օրմանեան, 2001, 1367]: Զարհուրելի եղելությունը բացահայտվել է հաջորդ առավոտյան, երբ ժամերգության համար Սուրբ խաչ էր գնացել գյուղի քահանան:

[1] Հունարեն «Պենտեկոստե» նշանակում է հիսուն օր կամ հիսներյակ: Սա հոգեգալստյան տոնն է, որը կատարվում է Սուրբ Հարության հիսուներորդ օրը:

Հանցագործության վայր է գալիս գավառի եպիսկոպոս Սամվելը[1], ձերբակալում է աղանդավորների առաջնորդներին, տանում Ջերմա քաղաք և հրամայում «աղուէսախարանօք զդէմս նոցա դրոշմել» [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 129]: Դատելով հետագայում քննության ժամանակ պարզված հանգամանքներից՝ Սամվելի գլխավորած ժողովրդական վրեժխնդրության ալիքը եղել է անողոք, նրանք ոչ միայն աղանդավորների տներն են ավերել, այլև կալվածքները հրկիզել: Բազմաղբյուրի միջադեպը այնքան մեծ հնչեղություն է ստացել, որ իշխանությունը գործը քննելու համար քննիչ է ուղարկել Եկեղյաց գավառ: Քննիչը, որի անունը Եղիա էր, իր մոտ է կանչել եպիսկոպոսին: Նա պատկառելի բազմության ուղեկցությամբ ներկայացել է Փրրիս քաղաքի եպիսկոպոսարանում ձևավորված դատական ատյան: Հակառակ Վրվեռ իշխանի ձեռնարկած զարտուղի միջոցների՝ դատական ատյանը արդար որոշում է կայացրել և դատապարտել կաշեցիների սրբապիղծ արարքները: Բազմաղբյուրի միջադեպով եկեղեցին ցուցադրական դաս է տվել ազգային կառույցները քանդել փորձող աղանդավորներին: Ճիշտ է, հակառակորդների դեմ պայքարում եկեղեցին խուսափել է բռնի միջոցներ կիրառելուց, սակայն Բազմաղբյուրի դեպքում հնարավոր չեղավ շրջանցել նաև ֆիզիկական բռնություններն ու դաժան պատիժները:

Հոգևորականների և աշխարհիկ իշխանների մասնակցությունը Թոնդրակյան շարժմանը հայ հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալական ու քաղաքական ճգնաժամի նշան էր: Մանր հողատեր իշխանները ներգրավվում էին շարժման մեջ խոշոր հողատերերի ճնշման ու իրենց անշարժ ունեցվածքը կորցնելու մշտական վտանգից: Միաժամանակ հոգևորականներին և հողատերերին թոնդրակյանների շարքեր էին բերում Բագրատունյաց պետության քաղաքական ճգնաժամը, որը հետևանք էր երկրի ներքին քաղաքական պառակտվածության, Բյուզանդական կայսրության առաջխաղացման և հայկական հողերի կորստյան [Հայ ժողովրդի պատմություն, 1976, 300]: Ժամանակակից Լաստիվերցի վարդապետը, անխնա հայհոյելով ու վարկաբեկելով թոնդրակյաններին, չի բացահայտում նրանց իրական գաղափարներն ու նպատակը [Բաբայան, 1981, 144]:

Սարգիս Ա Սևանցու գրական ժառանգությունը: Սկզբնաղբյուրներում տեղեկություններ են պահպանվել Սարգիս Սևանցու գրական ժառանգության վերաբերյալ: Խոսելով Հայոց հայրապետի մարդկային ու հոգևոր առաքինությունների մասին՝ նրա պատվերով պատմություն գրող հեղինակը ոչ մի խոսք չի ասում նրա ստեղծած գրական արժեքների մասին: Սակայն դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող էր Սևանավանքի նման հռչակավոր դպրության կենտրոնում ուսանած, իսկ հետագայում այն ղեկավարած անձնավորությունը օժտված չլինել գիտաուսումնական երևելի կարողություններով և ստեղծած չլիներ գրական գործեր: Թվարկելով Գագիկ արքայի ժամանակաշրջանի նշանավոր վարդապետների անուններ, որոնք «երևեցան յայնմ ժամանակին լուսաւորք», Մատթեոս Ուռհայեցին հիշատակում է նաև Սարգիս Սևանցու անունը [Մատթէոս Ուռհայեցի, 1898, 179]:

---

[1] Արիստակես Լաստիվերցին Սամվելին անվանում է հայրապետ, տե՛ս Արիստակես Լաստիվերտցի, 1963, 130: «Մանանաղի գաւառը Յունական բաժնին մէջ կը մնար, եւ Սամուէլ, որ հայրապետ կը կոչուի, այդ կողմերուն գլուխ եպիսկոպոսացն էր, պատկառելի եւ ծերունի եպիսկոպոս մը»,– պարզաբանում է Մ. Օրմանյանը, տե՛ս Օրմանեան, 2001, 1367:

Պատմիչ Լաստիվերցին հիշում է Սարգիս Ա-ի ժամանակ Անիի կաթողիկոսարանում գործող երեք նշանավոր վարդապետների. «Եւ էին յայն ժամանակի վարդապետք՝ Սարգիս և Տիրանուն և Յենովք, որ կաթողիկոսարանին էին վարդապետք» [Արիստակես Լաստիվերցի, 1963, 26][1]: Կաթողիկոսն իր գործակիցներով զբաղվում էր հիմնարար գիտական խնդիրներով: Հայտնի է, որ նրա օրոք համակարգվել ու ժամանակագրական հաջորդականությամբ դասավորելու նպատակով դասակարգվել են հայոց եկեղեցական իրավունքի և ընդհանրապես հոգևոր-եկեղեցական կյանքը կարգավորող գլխավոր վավերագրի՝ Հայոց կանոնագրքի նյութերը՝ 40 կանոնախմբերով, իսկ դրանց վերջում ավելացվել է կաթողիկոսների գավազանագիրքը, որի վերջին նշումը վերաբերում է հենց Սարգիս Սևանցու ձեռնադրությանը [Մաթևոսյան, 2008, 9-10]:

Շարակնոցում նրա գրչին է պատկանում Հանգստյան կարգի «Սարսափելի որոտմամբ» սկզբնատողով, Ահեղ դատաստանի տեսարանները պատկերող և մեղեդիական առումով ներքին ուժ ու դրամատիկ հաստատակամություն արտահայտող «Տէր Յերկնիցը», որի տնագլուխները հոդում են «Սարգիս» անունը [Արեւշատեան, 1995, 211-212]:

«Տեառն Սարգսի՝ տիեզերափայլ եւ մեծաշնորհ հովուապետի» հանձանարարությամբ է գրվել Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի «Պատմութիւն տիեզերական» խորագրով մեծարժեք երկը, որն արդյունք է գրական-մշակութային նշանակալի գործունեության [Ասողիկ, 2010, 828]: Ասողիկի՝ քրիստոնեական գաղափարախոսության համամարդկային բնույթը շեշտող, համաշխարհային պատմության ժանրի սկզբունքներով շարադրված երկը, բացի գիտական և տեղեկատվական արժեք ներկայացնելուց, հետապանդում էր նաև ժողովրդի շրջանում քրիստոնեական քարոզչությունը ուժեղացնելու, թոնդրակյանների գաղափարախոսական սնանկությունը բացահայտելու և պետության ու եկեղեցու միասնությունը շեշտելու խիստ գործնական

[1] Այդ ժամանակ կաթողիկոսարանում ծառայող նշանավոր վարդապետ Սարգիսի և հայոց կաթողիկոսի նույնանունությունը առիթ է տվել շփոթությունների: Վերջնականապես պարզաբանված չէ մի շարք գրական-երաժշտական ստեղծագործությունների հեղինակային պատկանելության հարցը: Սարգիս Սևանցու գրչին է պատկանում Շարակնոցում պահպանված Հանգստյան կարգի «Սարսափելի որոտմամբ» սկզբնատողով, Ահեղ դատաստանի տեսարանները պատկերող և մեղեդիական առումով ներքին ուժ ու դրամատիկ հաստատակամություն արտահայտող «Տէր Յերկնիցը»: Այն գրված է անվանական աքրոստիկոսի ձևով և հոդում է հեղինակի «Սարգիս» անունը, տե՛ս Արեւշատեան, 1995, 211: Սարգիս Սևանցին ունի նաև հունարենից հայերեն թարգմանված, ննջեցելոց նվիրված, մասնավոր հիշատակարան ունեցող տե՛ս Զարբհանալեան, 1897, 591: XI դարի նշանավոր գիտնական, ռազմական ու քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոսը, որը ժամանակի աչքի ընկնող մարդկանց հետ վարել է գիտական ու փիլիսոփայական բովանդակությամբ թղթակցություններ, նամակագրություն է ունեցել նաև Սարգիս Սևանցու հետ: «Հզաւր հռետոր և աստուածայինդ տէլէտիս». այսպես է ժամանակի ամենակրթված մարդը՝ Գրիգոր Մագիստրոսը, դիմում իր հասցեատիրոջը՝ Սարգիս Սևանցի վարդապետին: Տարակուսելով, որ վերջինս արդեն երկրորդ անգամ չի պատասխանում իր նամակին, բացահայտորեն արտահայտում է իր ցանկությունը. «Միշտ կարօտեալ եմ բանի քում և գրի: Քանզի հզօր ես ի պուետիկոսական մատենագրութեան. և սիրելի ինձ ոչ այլ ինչ՝ եթե ոչ այնպիսի ինչ լսել կամ ասել», տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, 1910, 57: «Տէլէտիս» եզրույթով կոչել են նաև վարդապետական այնպիսի աստիճանի հասած հոգևորականներին, որոնք իրավունք են ունեցել կրթելու նոր վարդապետների և նրանց շնորհելու վարդապետական գավազան, տե՛ս Վարդազարյան, 2020, 155: Հ. Աճառյանի կարծիքով Գ. Մագիստրոսը թղթակցել և նման բարձր մակդիրներով բնորոշել է ոչ թե Սարգիս Սևանցի կաթողիկոսին, այլ կաթողիկոսարանում ծառայող Սարգիս վարդապետին, որին իր մոտ է հրավիրել հայոց թագավոր Գագիկ Բ-ն (1042-1045): 1044 թ. այս Սարգիսը դեռևս ողջ էր, տե՛ս Աճառյան, 1948, 409-410:

նպատակներ [Մարգարյան, 2014, 299-300, Margaryan, 2013, 47]: Այդ բոլորը բացատրելի ու հասկանալի է դառնում, երբ նկատի ենք ունենում Ասողիկի ապրած օրերը. Հայաստանն ապրում էր ներքին սոցիալ-դասակարգային ալեկոծությունների մի շրջան, երբ մարդիկ «աստվածավաճառք և աղօթքատեացք» էին դարձել, հավատացյալները խուսափում էին «ի եկեղեցւոյ, ի խաչէ, ի յաւետարանէ, ի քահանայից, յաղօթից և պահոց», «թքանեն ի խաչ և ի եկեղեցի», գոչում էին «ոչ գոյ աստուած», և այդ անում էին ոչ միայն «փոքրերը»՝ գյուղացիները, այլև «մեծերը»՝ իշխանները [Բաբայան, 1981, 120-121]:

Սարգիս Սևանցու հրաժարականը: Սարգիս Սևանցու կյանքի ուղու ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 992 թ. կաթողիկոս ընտրվելիս նա արդեն ուներ հոգևոր-ճգնավորական գործունեության պատկառելի փորձառություն: Ենթադրելի է, որ 990-ական թվականներին նրա տարիքն արդեն 6 տասնամյակի շրջանում էր: Նրա հետագա 27-ամյա [Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի, 1861, 366][1] գործունեությունը շարունակվում է հայրապետական պաշտոնում, որից հետո 1019 թ., մոտ 90-ամյա տարիքում հրաժարվում է աթոռից: Պատմական մատյաններում կաթողիկոսի հրաժարվելու հանգամանքները լուսաբանված չեն: Ուսումնասիրությունների մեջ գերիշխող տեսակետն այն է, որ Սարգիս Սևանցին հայրապետական աթոռից հրաժարվել է ծերունական տկարության պատճառով: Սակայն սա համոզիչ վարկած չէ, քանի որ բազմաթիվ կաթողիկոսներ մահացել են խոր ծերության մեջ: Մյուս կողմից՝ սա դեմ էր հայ եկեղեցու կանոնին և ավանդությանը, քանի որ կաթողիկոսական աթոռակալությունը ցմահ էր [Մելիք-Թանգեան, 1905, 125]: Սկզբնաղբյուրներում չի ասվում, թե ում օրոք է եղել նրա հրաժարականը: Տրամաբանությունը հուշում է, որ ծերունազարդ առաջնորդը պետք է աթոռակալած լինի այնքան ժամանակ, քանի դեռ գահին եղել է իր հովանավոր արքան՝ Գագիկ Ա-ն: Պատմագիտության մեջ ընդունված է, որ Գագիկ Ա-ն մահացել է 1020 թվականին[2]: Եթե այս տարեթիվը ստույգ է, ուրեմն մահվանից մեկ տարի առաջ նա աթոռանկ է արել 27 տարի հայ եկեղեցին բարեհաջող առաջնորդած խոհեմ և սրբակյաց հոգևորականին ու նրա իսկ ձեռքով նոր կաթողիկոս կարգել Պետրոս Գետադարձին: Մինչդեռ պարզվում է, որ Գագիկ Ա-ն մահացել է այդ ամենից ավելի վաղ: Այս տեսակետը փաստարկված հիմնավորում է պատմաբան Կ. Յուզբաշյանը: Վկայակոչելով Վահրամ Պահլավունու հստակ թվագրված Մաստարայի 1015 թ. արձանագրությունը, որտեղ հիշվում է Գագիկ Ա-ն [Ալիշան, 1890, 136], այնուհետև՝ Տեկորի՝ ոմն Թաթուլի 1018 թ. թվագրված արձանագրությունը, որում հիշվում է Հովհաննես-Սմբատը [Ալիշան, 1881, 134-135] Կ. Յուզբաշյանը եզրակացնում է. «Տեսնում ենք, որ Գագիկ Ա-ն վախճանվել է մինչև 1018 թվականը՝ 1017 թվականին, նույնիսկ՝ 1016 թվականին» [Юзбашян, 1973, 197, Юзбашян, 1988, 156-157, ծանոթ. 68]: Պատմաբանի վկայակոչած վիմագիր փաստերը ամրապնդվում են նաև Ասողիկի և Սամվել

[1] Այլ մատենագիրներ նրան հատկացնում են 24-ամյա պաշտոնավարություն, տե՛ս Սամուէլ Անեցի, 2014, 179,; Կիրակոս Գանձակեցի, 1961, 88, Վարդան վարդապետ, 1862, 90, Մխիթար Անեցի, 1983, 69:

[2] Ըստ Վարդան պատմագրի՝ Գագիկ Ա-ն մահացել է Հայոց 444 թվականին (995), տե՛ս Վարդան վարդապետ, 1862, 92: Ուռհայեցու երկում Գագիկ Ա-ի մահվան տարեթիվ նշված է հայոց 420 թվականը (971), տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, 1898, 7: Կարծում ենք՝ ժամանակային նման մեծ շեղումները առաջացել են հետագա արտագրողների կողմից թվատառերի շփոթի հետևանքով:

Անեցու վկայություններով: Ինչպես փաստում է Ասողիկը, Սմբատ Բ-ից հետո «ի նոյն աւր՝ թագաւորեաց Գագիկ եղբայր նորա ի ՆԼԸ (989) թուականին» [Ասողիկ, 2010, 808]: Նրա մոտ Գագիկի գահակալման տարիների թիվը ամբողջական չէ, քանի որ պատմության շարադրումն ավարտում է 1004 թ.՝ «հնգետասան ամ թագաւորութեանն Հայոց Մեծաց Գագկայ արքայի» [Ասողիկ, 2010, 828]: Սամվել Անեցին Գագիկ Ա Բագրատունուն հատկացնում է 29 տարվա գահակալություն [Սամուէլ Անեցի, 2014, 179-180]: Համադրելով երկու հեղինակների տեղեկությունները և 989 թվականն ընդունելով Գագիկ Ա-ի գահակալման առաջին տարի՝ նրա 29-րդ տարին համընկնում է 1017-1018 թվականներին:

Քննության առարկայի վերաբերյալ արժանահավատ մատենագրական նյութ ունի Լաստիվերցին, որի շարադրանքում մեծ մասամբ պահպանված է դեպքերի հաջորդականությունը. Գագիկ Ա-ից հետո իշխանությունը ժառանգում են նրա երկու որդիները՝ Հովհաննես-Սմբատը և Աշոտը: Ժառանգության հարցում նրանց միջև գժտություն է ծագում. «Սոքա ընդ միմեանս անկեալք հակառակութեամբ վասն բաժնից երկրին՝ կարօտացան իրաւանց և դատաստանի» [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 27]: Եղբայրներին հաշտեցնում է Վրաց և Աբխազաց Գեորգի թագավորը (1014-1027) ու որոշում նրանց հասանելիք գավառները[1]: Այնուհետև շարադրելով եղբայրների միջև հաստատված status quo-ն ամրապնդելու ուղղությամբ կատարված քայլերը՝ պատմիչը հայտարարում է. «Մինչ ցայս վայր պատմութիւնս մեզ հեշտալի է» [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 28]: Հեղինակի հոգեվիճակը բնութագրող այս ուշագրավ խոստովանությունը ակնարկ է նկարագրված իրադարձություններին հաջորդած պատուհասների մասին, որոնք հանգեցրին հայոց պետականության կորստին: Չշեղվելով ժամանակագրությանը հետևելու գովելի սկզբունքից՝ Լաստիվերցին պատմում է, որ Թեոդոսուպոլիսը վերաշինելու նպատակով 1018 թ. Վասիլ Բ կայսրը ուղարկում է նիկոմիդիացի մի իշխանի: Շարունակության մեջ ասում է. «Եւ ի չորեքհարիւր վաթսուն և ութ թուականին (1019)՝ ձեռնադրի տէր Պետրոս ի կաթողիկոսութիւն առ կենօքն տէր Սարգսի» [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 28]: Վերոշարադրյալը ցույց է տալիս, որ Պետրոս Գետադարձի ձեռնադրությունը կատարվել է 1019 թ.՝ Գագիկ Ա-ի որդիների՝ Հովհաննես-Սմբատի և Աշոտի օրոք:

Գագիկ Ա-ի մահվանից հետո Հայաստանում աճում է ներքաղաքական լարվածությունը: Անզիջում և սրված հարաբերություններով «երկու առաջին» դեմքերի վեճի կարգավորումը վեր էր քաղաքական հենարանից զրկված շուրջ 90-ամյա կաթողիկոսի ուժերից: Այդ պատճառով նա պարտադրված էր «ընտրել» հրաժարականի տարբերակը և Պետրոս Գետադարձին (1019-1058) «ի կենդանութեանն իւրում օծեալ էր իւրով ձեռօք ի յԱնի մեծ հանդիսիւ»,– հիշյալ դեպքերից ավելի քան երկու դար հետո արձանագրել է պատմագիր Վարդան Արևելցին [Վարդան վարդապետ, 1862, 93]: Այս կարծիքը հաստատում է նաև Լ. Տեր-Պետրոսյանի հրատարակած վավերագիրը՝ «Պատմութիւն սրբոց հարցն մերոց որք առ Քրիստոս փոխեցան» վերնագրով. «Ա՛ռ կաթուղիկոսութիւն եկեղեցպանն Կաթուղիկէյին, այն որ Սարգիս անուն, այր հեզ եւ առայքինին: Եւ ապայ ձանձրացաւ ի ծփանաց աշխարիս, ընտրեն զտէր Պետրոս ազատ ազգէ, երեւելի շնորհօք եւ հասակաւ» [Տեր-Պետրոսյան, 2007, 510]: Նորահայտ սկզբնաղբյուրը վկայում է, որ հեզ և

[1] Միանգամայն տեղին էր, որ եղբայրների միջև հաշտարար միջնորդ լիներ հայոց կաթողիկոսը, սակայն այդ մասին սկզբնաղբյուրներում վկայություն չկա, տե՛ս Մաթևոսյան, 2008, 14:

առաքինի կաթողիկոս Սարգիսը ձանձրանում կամ նեղվում է երկրի ալեկոծ, խռովահույզ վիճակից, ուստի նրա փոխարեն ընտրում են ազատ տոհմից սերող Պետրոսին: Պատմաբան Կ. Մաթևոսյանը իրավացիորեն նկատում է, որ «ի ծփանաց աշխարիս» ձանձրացած կաթողիկոսը Գագիկ Ա-ի օրոք չէր կարող (գուցե նաև չէր ուզի) հրաժարվել աթոռից [Մաթևոսյան, 2008, 15]: Դա տեղի է ունեցել Հովհաննես-Սմբատի գահակալության սկզբում, երբ ձևավորվել էին նոր իրողություններ: Ներքին և արտաքին նոր մարտահրավերներին դիմակայելու համար Հովհաննես-Սմբատը կարիք ուներ եկեղեցու անվերապահ աջակցության: Այդ պատճառով Պետրոս Գետադարձի աթոռակալությունը տեղի ունեցավ նախորդ կաթողիկոսի կենդանության օրոք կաթողիկոսների հաջորդականության ավանդական կարգի խախտմամբ ու քաղաքական լարված պայմաններում:

«Պաշտոնն ու պատիվները» հանձնելով Պետրոս Ա Գետադարձին՝ Սարգիս Սևանցին հեռացավ կաթողիկոսարանից՝ կյանքի մնացած օրերը անցկացնելով «պարապելով աղոթից» (Օրմանեան, 2001, 1377): Պետրոս կաթողիկոսի և Վասիլ Բ-ի միջև կնքված չարաբաստիկ պայմանագրի օրերին նա դեռևս ողջ է եղել: 1022 թ. Աստվածահայտնության տոնի օրը՝ հունվարի 6-ին՝ ջրօրհնեքի արարողությունից հետո Տրապիզոնում Պետրոս Գետադարձի ձեռքով գրվեց «հայոց կորստեան գիր և նամակ. քանզի Յովհաննէս պատուէր տուեալ էր հայրապետին, եթե գրէ՝ գիր և տու՛ր կտակ թագաւորին (Վասիլ Բ–Վ. Ա.), զի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս և զերկիրս նմա տաց ի ժառանգութիւն» [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 32]: Ցավալի այս փաստն արձանագրելուց հետո Լաստիվերցին ավելացնում է. «Ի սոյն ժամանակս փոխի յաշխարհէ սուրբ և արժանաւոր հայրապետն տէր Սարգիս» [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 32]: Սմբատ Սպարապետը հաստատում է այս տեղեկությունը՝ ասելով. «Իսկ ի թուին 471 (1022) մեռաւ Տէր Սարգիս կաթողիկոսն» [Սմբատ Սպարապետ, 1859, 48]: Մատենագրական աղբյուրները չեն հայտնում, թե որտեղ է նա անցկացրել հետկաթողիկոսական կյանքի երեք տարին: Սակայն ենթադրվում է, որ այդ ժամանակահատվածում ապրել է այնտեղ, որտեղ «է գերեզման նորա», այսինքն՝ «ի Հռոմոսի վանքն» [Արիստակես Լաստիվերտցի, 1963, 32] [1]:

Եզրակացություններ: Ամփոփելով շարադրանքը՝ հանգում ենք հետևյալ հիմնական եզրակացությունների.

- Հայոց արքա Գագիկ Ա Բագրատունու կամքով, երբ թագավորությունը գտնվում էր իր վերելքի ամենաբարձր կետում, կաթողիկոս ընտրվեց Սևանավանքի վանահայր, ժամանակի նշանավոր հոգևոր-մշակութային գործիչ Սարգիս Սևանցին (992-1019): Այդ ժամանակահատվածում հայոց քաղաքական և եկեղեցական իշխանությունների միջև ձևավորված էին սերտ փոխգործակցային հարաբերություններ:

[1] Հռոմոսի վանքը գտնվում է Այրարատ նահանգի Շիրակ գավառում՝ Անիից հյուսիս-արևելք՝ Ախուրյան գետի աջ ափին: Հիմնադրվել է հայոց թագավոր Աբաս Բագրատունու օրոք (929-953): Այն եղել է միջնադարյան Հայաստանի մշակութային կենտրոններից, ունեցել է հարուստ մատենադարան: Հռոմոսի վանքը եղել է Բագրատունիների տոհմական հանգստարանը, տե՛ս Քրիստոնյա Հայաստան, 2002, 602-604:

- Ավատական մասնատվածության դարաշրջանում Գագիկ Ա-ն կարևորում էր հայոց եկեղեցու դերը երկրի քաղաքական միասնության ապահովման, ներիշխանական հակամարտությունների կարգավորման ու պետականության շուրջ ժողովրդին միավորելու հարցում: Համախմբող առաքելության արդյունավետ իրականացման նկատառումներից թելադրված՝ Սարգիս Սևանցու նախաձեռնությամբ 992 թ. երկրի հոգևոր կենտրոնը Արգինայից տեղափոխվեց Անի, որտեղ պետք է մեկտեղվեին երկրի քաղաքական ու եկեղեցական իշխանությունները: Անին կառուցապատվում և զարդարվում էր հրաշագեղ հոգևոր շինություններով, որոնց թվում էր Կաթողիկե եկեղեցին՝ Մայր տաճարը:
- Գագիկ Ա Բագրատունու մահից (1018 թ.) հետո, Սարգիս կաթողիկոսին չհաջողվեց հաշտեցնել նրա իրավահաջորդներին՝ հակամարտող եղբայրներ Հովհաննես-Սմբատին ու Աշոտ Դ-ին: Երկրի ներքաղաքական խորացող լարվածության իրավիճակում Սարգիս Սևանցին ստիպված էր հրաժարվել կաթողիկոսի պաշտոնից և իր փոխարեն նոր կաթողիկոս ձեռնադրել Պետրոս Գետադարձին:
- Եկեղեցու նվիրապետական կառույցի միասնությունն ամրապնդելու նպատակով Սարգիս Ա Սևանցին 1006 թ. վերահաստատեց Սյունյաց աթոռի մետրոպոլիտական առանձնաշնորհումները և նահանգի հոգևոր նոր առաջնորդ ձեռնադրեց Հովհաննես Է-ին (1006-1058):
- Հայոց հայրապետն անողոք պայքար է մղել Ապահունիք, Մանանաղի, Հարք գավառներում ուժեղացած թոնդրակեցիների դեմ, որոնք թիրախավորել էին հայոց եկեղեցու նվիրապետությունն ու վարդապետությունը: Պատժական խիստ միջոցներով ճնշել և կանխել է նրանց տարածումը երկրի այլ շրջաններում:
- Կաթողիկոսը կիսել է ժողովրդին պատուհասած բոլոր դժվարությունները և անգամ ամենաօրհասական պահերին չի լքել հոտը: 998 թ. անմիջական մասնակցությամբ նա քաջալերում էր Ատրպատականի Մամլան ամիրայի դեմ մարտնչող հայ-վրացական զորքերին Ծումբի ճակատամարտում:
- Սարգիս Ա Սևանցին զբաղվել է գրական-երաժշտական գործունեությամբ: Նրա օրոք համակարգվել են Հայոց կանոնագրքի նյութերը՝ 40 կանոնախմբերով:
- Սարգիս Ա Սևանցու աթոռակալության ժամանակաշրջանում շարունակվել է հակամարտությունը Բյուզանդական եկեղեցու հետ, որի գագաթնակետը 1007 թ. Ծռազատիկն էր: Այդ թվականին՝ 257 տարվա ընդհատումից հետո, Ծռազատիկի տոնը վերականգնվել է:

Գրականության ցանկ

Ալեքսանյան Վ. 2020, Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի աթոռակալությունը և հայ-բյուզանդական եկեղեցական հակամարտությունը X դարի վերջին քառորդին, ՎԷմ համահայկական հանդես, №3, էջ 70-91:

Ալեքսանյան Վ. 2020, Սյունյաց աթոռի մետրոպոլիտական աստիճանի վերահաստատումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», №2, էջ 69-88:

Ալիշան Ղ. 1890, Այրարատ, Սուրբ Ղազարի տպարան, Վենետիկ, 590 էջ:

Ալիշան Ղ. 1881, Շիրակ, Սուրբ Ղազարի տպարան, Վենետիկ, 192 էջ:

Աճառյան Հ. 1948, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Պետական համալսարանի հրատ., Երևան, 683 էջ:

Արեւշատեան Ա. 1995, Անիի երաժշտական մշակույթը և նրա հետ կապված շարականագիրները, «Բազմավեպ», №1-4 էջ 203-218:

Բաբայան Լ. 1981, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX-XIII դարեր), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 391 էջ:

Գրիգոր Մագիստրոսի թղթերը (1910), բնագիրն յառաջաբանով և ծանոթագրութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղեքսանդրապոլ, տպարան Գէորգ Մաճոյեանցի, 352 էջ:

Եղիազարյան Ա. 2021, Հայոց Սմբատ Բ թագավորի և Գագիկ Բագրատունու փոխհարաբերությունները, «Հայագիտության հարցեր», №3, էջ 23-36:

Զարբհանալեան. 1897, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Մխիթարեան տպ., Վենետիկ, 1897, 822 էջ:

Էյնաթյան Զ. 2017, Զատիկ եւ ծռազատիկ (3). ԺԷ դարի տոմարագետ Ավիկի «Սակս ծռազատիկին» մեկնությունը, «Բանբեր Մատենադարանի», 3, էջ 367-389:

Կանոնագիրք Հայոց. 1971, հատ. Բ, աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, ՀՍՍՀԳԱ հրատ., Երևան, 473 էջ:

Կիրակոս Գանձակեցի. 1961, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 426 էջ:

Հայ ժողովրդի պատմություն. 1976, հ. Գ, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսերից մինչև XIV դ. կեսերը), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1023 էջ:

Հայոց պատմություն. 2014, հ. Բ, Միջին դարեր (IV-XVII դարի առաջին կես), Գիրք II, (IX դարի կես-XVII դարի առաջին կես), «Զանգակ-97» հրատ., Երևան, 800 էջ:

Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի 1862, Սուրբ Ղազարի տպ., Վենետիկ, 184 էջ:

Հացունի Վ. 1927, Կարեւոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն, տպ. Ս. Ղազար, Վենետիկ, 588 էջ:

Հովհաննիսյան Ա. 1957, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 524 էջ:

Մաթևոսյան Կ. 1992, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և քաղաքամայր Անին, Էջմիածին, Ը, էջ 38-45:

Մաթևոսյան Կ. 2008, Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, ՊԲՀ, N-3, էջ 3-30:

Մաթևոսյան Կ. 2021, Անին և Անեցիները, Մատենադարան, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, Տիգրան Մեծ տպ., Երևան, 464 էջ:

Մարգարյան Հ. 2014, Միջնադարեան հայ պատմագրութեան բնութագրական գծերը և պարբերացումը, «Հանդէս ամսօրեայ», №1-12, էջ 271-316:

Մատթէոս Ուռհայեցի 1898, Ժամանակագրութիւն, տպ. Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 448 էջ:

Մելիք-Թանգեան Ն. 1905, Հայոց եկեղեցական իրավունքը, հ. Բ, Տպ. Բ. Տեր-Սահակյանցի, Շուշի, 279 էջ:

Միխիթար Անեցի 1983, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ՝ Հ. Մարգարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 140 էջ:

Չամչյան Մ. 1984, Հայոց պատմություն, հ. Բ, ԵՊՀ հրատ., Երևան, 1060 էջ:

Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ 1963, աշխատասիր. Կ. Յուզբաշյանի, Երևան:

Սամուէլ Անեցի և շարունակողներ 2014, Ժամանակագրութիւն, Երևան, «Նաիրի» հրատ., 502 էջ:

Սարգիսեան Բ. 1893, Ուսումնասիրութիւն Մանիքէա-Պաւղիկեան թոնրակեցիներու աղանդին եւ Գր. Նարեկացւոյ թուղթը, տպ. Ս. Ղազար, Վենետիկ, 117 էջ:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի 2000, Տիեզերական պատմություն, թարգմ., առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, ԵՊՀ հրատ., 455 էջ:

Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ 2010, Պատմութիւն Տիեզերական, Մատենագիրք հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, ԵՊՀ հրատ., Անթիլիաս-Լիբանան, 893 էջ:

Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի 1861, Պատմութիւն Տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, տպ. Լազարեան ճեմարանի, Մոսկվա, 386 էջ:

Վարդազարյան Օ. 2020, «Տէլէտ(իս) / Տելետ(իս)». մակդիրի իմաստաբանությունը: Սեն Արևշատյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի նյութեր (22-23 մայիս, 2019), Երևան էջ 150-156:

Տարեգիրք Սմբատայ Սպարապետի 1859, Տպ. Է. Թունոյի, Փարիզ, 180 էջ:

Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի 1897, Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, Արարատ, թիվ Գ, էջ 129-141:

Տեր-Մինասյան Ե. 1968, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 239 էջ:

Տեր-Պետրոսյան Լ. 2007, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Գ. Կիլպէնկեան հիմնարկություն, Երևան, 672 էջ:

Քիւրտեան Յ. 1967, Յովհաննէս վարդապետ Կոզեռն, «Հանդէս ամսօրեայ», № 1-3, էջ 1-14:

Քրիստոնյա Հայաստան. 2002, Հանրագիտարան, Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբագր., Երևան, 1070 էջ:

Օրմանյան Մ. 2001, Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1870 էջ:

Юзбашян К. 1988, Армянские государства в эпоху Багратидов и Византия IX-XI вв., Издательство Наука, Москва, 300 էջ:

Юзбашян К. 1973, К хронологии правления Гагика I Багратуни, Античная древность и средние века, вып. 10, էջ 195-197:

Margaryan H. 2013, Characteristic Features and Periodic Classification of the Medieval Armenian Historiography, «Բանբեր հայագիտության», №1, էջ 34-60: